Ռ.ՍԱՀԱԿՅԱՆ, Կ.ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ, Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո
Երևան, 1995, 57 էջ

Աշխատության հեղինակները հայրենական և արտասահմանյան պատմագրության նորագույն տվյալների և գնահատականների հիման վրա քննության են առել հայերի ցեղասպանության դրդապատճառները և նախադրյալները, նրա իրականացման մեխանիզմներն ու հետևանքները, մեծ տերությունների դիրքորոշումը և ժամանակակից աշխարհի վերաբերմունքը Հայոց ցեղասպանության հարցում և այլն:

Գրքույկն, ըստ էության, հիմնահարցի պատմագրության համառոտ տեսություն է: Այն բաղկացած է տասը դրվագներից. հեղինակները շարադրում են Օսմանյան կայսրության ձևավորման, նրա կողմից նոր տարածքների զավթման, Թուրքիայի և Սեֆյան Իրանի բախումների և այս իրադարձությունների՝ հայության վրա ունեցած հետևանքների հակիրճ պատմությունը:

Գրքույկի «Հայկական հարցը» հատվածում նշվում է, որ XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը խոր ճգնաժամ էր ապրում: Ավատապետական խավարն ու հետամնացությունը, թուրքական լծի դեմ սլավոնական և քրիստոնյա ժողովուրդների ըմբոստացումները ցնցում էին կայսրության հիմքերը:

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմում պարտություն կրելով՝ Թուրքիան ստիպված էր հաշտություն խնդրել. կնքվեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Հայտնվեց 16-րդ հոդվածը արևմտահայերի մասին, ըստ որի Թուրքիան պարտավորվում էր Արևմտյան Հայաստանի տարածքում բարեփոխում-

ներ իրականացնել և երաշխավորել հայ բնակչության ապահովությունը: Այդ հոդվածով արևմտահայության հարցը, Հայկական հարց անվանումով, դարձավ եվրոպական դիվանագիտության քննարկման խնդիր:

Եվրոպական մեծ տերությունների շահերին աննպաստ էր Բալկաններում և Կովկասում ռուսական ազդեցության ուժեղացման պարագան: Ուստի նրանք պահանջեցին Հայկական հարցը քննության առարկա դարձնել Բեռլինի վեհաժողովում: Վերանայվեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, որը Ռուսաստանի դիվանագիտության պարտությունն էր:Հայկական հարցը 16-րդի փոխարեն գրանցվեց 61-րդ հոդվածում, ըստ որի Արևմտյան Հայաստանի տարածքները կրկին մնում էին Թուրքիայի տիրապետության տակ, բացի Կարսի, Արդահանի և Բաթումիի նահանգներից: Հայերը, հիասթափված եվրոպական պետությունների վարած քաղաքականությունից, ըմբռնեցին, որ փրկությունը թուրք բռնապետության դեմ զինված պայքարն է: Բեռլինի վեհաժողովից հետո արևմտահայերի ազատագրական շարժումը թևակոխեց նոր փուլ:

Ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսները եղան մեծ վիպասան Ռաֆֆին, հրապարակախոս Գրիգոր Արծրունին, ազգագրագետ Գարեգին Սրվանձտյանը և այլ նշանավոր դեմքեր: Այս շրջանում կազմակերպվեցին հայ ազգային կուսակցությունները. դրանց ծրագրերի հիմնական կետը արևմտահայության ազատագրման խնդիրն էր թուրքերի բռնակալ լծից:

Թուրք կառավարողները ոչ միայն չկատարեցին Բեռլինյան պայմանագրի 61-րդ կետը, այլև հայերի նկատմամբ ուժեղացրին սոցիալական ու ազգային ճնշումը: Այս ծանր կացության մեջ էլ ծնվեց ֆիդայական շարժումը, որն սկիզբ առավ անցյալ դարի 80-ական թվականների կեսերին:

Չնայած հայ ֆիդայիների հերոսական պայքարին, այնուհանդերձ որևէ լուրջ հաջողություն ձեռք չբերվեց: Թուրքերը կարողացան սեպ խրել հայերի ու քրդերի միջև և վերջիններիս օգտագործել հայերի դեմ մղված պայքարում:

Բուլղարիայի կորստից հետո թուրքական իշխանություններն ավելի կատաղի սկսեցին հալածել հայերին՝ Հայկական հարցը մեկընդմիշտ փակելու նպատակով: Հաճախակի էին դառնում հայերի կոտորածները Կոստանդնուպոլսում, Կեսարիայում, Մարզվանում և այլուր: 1893-1894թթ. քրդերի օգնությամբ թուրքական կանոնավոր բանակը ավերեց

Սասունը, սրի քաշելով ավելի քան 17000 հայերի: Եվրոպական տերությունները պահանջեցին բարեփոխումներ կատարել Արևմտյան Հայաստանում: Սուլթան Համիդը, օգտվելով այդ երկրների միջև եղած հակասություններից, արագացրեց հայաջինջ իր ծրագրի իրականացումը, դիմեց զանգվածային կոտորածների, որոնք իրականացվում էին թուրքական կանոնավոր զորքերի ու քրդերի միջոցով: 1895-1996թթ. կոտորածներին զոհ գնացին 300 հազար հայ: Հազարավոր հայեր հեռացան հայրենի եզերքից, գաղթեցին օտար ափեր: Հայ կազմակերպությունների դիմումները եվրոպական պետություններին ստիպել թուրքերին դադարեցնել ջարդերը, մնացին անհետևանք: Հայտնի է Անգլիայի արտաքին գործոց նախարարության պաշտոնյաներից մեկի արտահայտությունը «Բրիտանական նավերը չեն կարող բարձրանալ Հայաստանի լեռները»:

Թուրքիայի գազանությունները դատապարտեցին Եվրոպայի նշանավոր մտավորականները՝ Անատոլ Ֆրանսը, Յոհաննես Լեփսիուսը, Վիկտոր Բերարը, Հենրի Լինգը և ուրիշներ: ժան ժորեսը խարանեց Եվրոպական կառավարությունների անտարբեր կեցվածքը. «Եվրոպայի անմռունչ ու կրավորական ցավակցությունը մեծագույն հանցագործություն էր, որով խրախուսում էին Սուլթանին և այն հանցագործություններն ու ապօրինությունները, որոնք միշտ էլ խռովություններ են հարուցում»:

1908-ին երիտթուրքերը պետական հեղաշրջումից հետո իրենց ձեռքն առան իշխանության ղեկը: Երիտթուրքերը ոչ մահմեդական ժողովուրդներին շռայլ խոստումներ էին տվել, բայց իշխանության գլուխ գալով՝ նրանք հրաժարվեցին իրենց խոստումներից և ազգայնամոլությունը բարձրացրին պետական քաղաքականության աստիճանի: Լավ հասկանալով, որ ոչ մահմեդական ժողովուրդներին դավանափոխելն այնքան էլ դյուրին գործ չէ, նրանք դիմեցին կոտորածների քանիցս փորձված միջոցին: Հնարածին պատրվակներով կազմակերպվեցին Ադանայի ջարդերը, որոնք խլեցին 30000 հայերի կյանք: Դրանով երիտթուրքերը դեն նետեցին իրենց դիմակը և հանդես եկան իրենց իրական կերպարանքով:

Հանգամանորեն քննարկելով 1915թ. ցեղասպանության դրդապատճառները, հեղինակները գրում են. «Երիտթուրքերն առաջնորդվում էին պանթուրքիզմի վարդապետությամբ, որը ձևավորվել էր 19-րդ դարավերջին, իբրև նորածին թուրքական բուրժուազիայի գաղափա-

ռախոսություն: Պանթուրքիզմի դոկտրինան երկրի ներսում ուղղված էր հիմնականում հայերի դեմ, երկրից դուրս՝ Ռուսաստանի: Եվ որպեսզի Թուրքիան դառնա միատարր ազգ, հարկ էր բնաջնջել հայությանը, ո-ռովհետև դավանափոխել նրան հնարավոր չէր: Ինչ վերաբերվում է Արևելյան Հայաստանին, ապա այն ընկած էր «Մեծ Թուրանի» ստեղծման ճանապարհին, ուստի պետք էր ոչնչացնել նաև արևելահայությունը՝ փաստորեն համայն հայությունը»:

Ցեղասպանությանը մղող գործոններից մեկը, Կ.Խուդավերդյանի և Ռ.սահակյանի կարծիքով, հայ բուրժուազիայից առաջնության դափնին խլելու ցանկությունն էր, մյուսը՝ հայերի ռուսական կողմնորոշումը:

Ջարգացվում է այն միտքը, որ հայերի բնաջնջումը ծրագրված էր նախօրոք, նախքան պատերազմական գործողությունների սկսելը: Հեղինակների կարծիքով, թուրք պատմաբանների այն պնդումը, թե հայերի տեղահանումը պատերազմական հետևանք էր՝ հնարածին և անհիմն է: «Միություն և առաջադիմություն» կուսակցության գաղտնի փաստաթղթերը, կուսակցության առաջնորդների կարգադրությունները, որոշումները հայերի բնաջնջման վերաբերյալ և ապա իրականացման եղանակները (հայկական տարածքները մահմեդական ցեղերով բնակեցումը, նրանց արհեստական գրգռումը հայերի դեմ, հայ զինվորների մեկուսացումն ու գնդակահարումը, երեխաների և կանանց բռնի թրքացումը և այլն), հնարավոր դարձրին Արևմտյան Հայաստանի հայաթափումը:

Անդրադառնալով 1915 ապրիլի 24-ին հայ մտավորականության զանգվածային ձերբակալություններին, աքսորին, սպանություններին, տեղահանություններին ու կոտորածներին, հեղինակները վկայակոչել են օտարերկրյա դիվանագետների մի շարք հաղորդումները իրենց կառավարություններին: Հիշատակվում է և այն փաստը, որ թուրք և քուրդ սակավ ընտանիքներ թաքցրել ու փրկել են հայ մարդկանց՝ հակառակ թուրք կառավարության սպառնալիքներին: Հայերի համար համակենտրոնացման ճամբարներում ստեղծվել են այնպիսի անտանելի պայմաններ, որ տեղահանվածների մեծ մասը զոհ դարձավ համաճարակ հիվանդությունների, սովի ու քաղցի: Թուրքերը համեմատաբար հեշտ հասան իրենց նպատակին, որովհետև հայ ազգաբնակչությունը, ազգային կուսակցությունները պատրաստ չէին դիմակայելու բնաջնջման սպառնալիքին:

Թուրք կառավարողներին հաջողվեց թուրք ամբոխին ներարկել ազ-

պայնամոլ գաղափարներ, հայերի դեմ հանել նաև քրդերին, մահմեդական մյուս ցեղերին, բանտերից ազատված քրեական հանցագործներին, ինչը և հեշտացրեց նրանց նպատակների իրագործումը:

«Հայերի ցեղասպանությունը մտահղացվեց և իրականացվեց իշխանության ղեկի մոտ կանգնած երիտթուրքերի կուսակցության առաջնորդների անմիջական ղեկավարությամբ», որի համար «որոշակի պատասխանատվություն է կրում և կայզերական Գերմանիան Թուրքիայի դաշնակիցը», - եզրակացնում են հեղինակները: Ի շարունակություն 1915-1916 թվականների հայերի ցեղասպանության, կոտորածները շարունակվեցին մինչև 20-ական թվականները, ինչպես երիտթուրքերի, այնպես էլ նրանց հետնորդ քեմալականների կողմից (Արևելյան Հայաստանում, Կիլիկիայում և Արևմտյան Անատոլիայում):

Համաշխարհային առաջին պատերազմում Գերմանիան և նրա դաշնակից Թուրքիան պարտվեցին: Սակայն բոլշևիկների հեղաշրջումը Ռուսաստանում կրկին ամրապնդեց Թուրքիայի դիրքերը: Արևելյան Հայաստանի վիլայեթներից ռուսական զորքերի ետ քաշվելը հնարավոր դարձրեց թուրքերի արշավանքը Կովկասի վրա: 1918-ին Թուրքիան առաջ շարժեց իր զորքերը՝ գրավելու նաև Արևելահայաստանը, բայց Սարդարապատի ճակատամարտում հայկական ուժերը ջախջախեցին թուրքերին: Սակայն վերջիններս կրկին շարժվեցին արևելք, մտան Բաքու և միանալով արյունակից ազերիներին, նորանոր կոտորածներ կազմակերպեցին Արցախում, Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում և այլուր: Նման իրադարձություններ տեղի ունեցան 1920-21թթ. Կիլիկիայում, Անատոլիայում և այլ վայրերում: 1922թ. Զմյուռնիայի ողբերգությամբ, հույների ու հայերի կոտորածով, ավարտվեց XX դարի առաջին ցեղասպանությունը, որը սկիզբ էր առել XIX դարի վերջերից, Սուլթան Համիդի տիրակալության օրերից:

Հեղինակներն անդրադարձել են նաև Վանի, Շատախի, Շապին-Կարահիսարի, Ուրֆայի, Մուսա լեռան և այլ վայրերում հայերի հերոսական ինքնապաշտպանական կռիվներին, մեծ տերությունների դիրքորոշմանը ցեղասպանության հանդեպ և, վերջապես, ցեղասպանության հետևանքներին: Կորցվեց պատմական հայրենիքի տարածքների մեծ մասը, ոչնչացվեցին պատմական հուշարձանները, և հայության բեկորները ցրվեցին աշխարհով մեկ, կազմավորվեց հայ Սփյուռքը՝ Արևելյան և Արևմտյան երկրներում, ԱՄՆ-ում և Ռուսաստանում:

Այնուհետև Խուդավերդյանը և Սահակյանը անդրադարձել են ցե-

ղասպանության հոգեբանական հետևանքներին, ցեղասպանության փաստի ընկալմանը՝ ժամանակակից աշխարհի, ցեղասպանության դատապարտման խնդրին՝ համաշխարհային հասարակության և միջազգային կազմակերպությունների կողմից: Հիշատակված է 1965թ. հայերի ցեղասպանության 50-ամյակի առթիվ Հելսինկիում կայացած խաղաղության համաշխարհային կոնգրեսի բանաձևի մեջ մտած հետևյալ կետը. «Այս տարի լրանում է հայկական կոտորածների 50-ամյա տարելիցը, կոտորածներ, որոնք կազմակերպվել էին Օսմանյան Թուրքիայի կողմից ազգային հարցը մի ամբողջ ժողովորդի բնաջնջման ուղիով լուծելու նպատակով: Այս ցեղասպանությունը խլեց ավելի քան մեկ ու կես միլիոն ազատասեր հայերի, այսինքն՝ հայ ժողովրդի երկու երրորդի կյանքը»: Նշվում է այն մասին, որ վերջին երկու-երեք տասնամյակների ընթացքում հայերի ցեղասպանության հարցը քննարկման առարկա է դարձել միջազգային մի շարք հեղինակավոր կազմակերպություններում՝ 1974թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովում, 1984թ. Փարիզում, 1987-ին Եվրոպառլամենտում, 1989թ. Եկեղեցիների խորհրդում և այլն:

Անդրադառնալով Թուրքիայի վերաբերմունքին ցեղասպանության իրողության նկատմամբ, հեղինակները հիշատակում են հայերի ցեղասպանությունը կազմակերպողների՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների դատավարությունը: Նշված է հենց նույն այդ ժամանակ Քեմալի հայտարարությունը, ըստ որի մեղադրանքներն անհիմն են: Ավելի ուշ սկիզբ է առնում, այսպես կոչված, ժամանակակից թուրք պատմագրությունը, ըստ որի հայկական կոտորածները թելադրված էին պատերազմական իրադրությամբ, և որ տեղի ունեցած ջարդերը եղել են փոխադարձ, այլ խոսքով ժխտվում է հայերի ցեղասպանությունը, ինչը և շարունակվում է մինչև այսօր: Ցեղասպանության ճանաչումը սարսափեցնում է Թուրքիային, որովհետև այն իր հետ կարող է բերել բարոյական, նյութական և տարածքային պահանջներ, որի իրավունքն ունի հայ ժողովուրդը: Հեղինակները եզրակացնում են, որ ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից կարող է նպաստել երկու հարևան երկրների՝ Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորմանը: